ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՍԻՍԻԱՆԻ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մայիսի 28-ին Սիսիանի Ս. Հովհաննես եկեղեցում, հանդիսապետությամբ Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի, Սուրբ Պատարագ մատուցեց Սիսիանի տարածաշրջանի հոգևոր հովիվ Տ. Գրիգոր քահանա Հովհաննիսյանը: Հընթացս Սուրբ Պատարագի, ձեռամբ հանդիսապետ Սրբազան Հոր, սարկավագական ձեռնադրություն ստացավ Սիսիան քաղաքի բնակիչ և Սիսիանի Սուրբ Հովհաննես եկեղեցու դպիր Հովնան Վարդանյանը:

Հովնան դպիր Վարդանյանն ուսանել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում, այնուհետև վերադառնալով հայրենիք՝ անցել զինվորական ծառայության, որից հետո ուսումը շարունակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քահանայից լսարանում:

Սարկավագական ձեռնադրության ընթացքում խարտավիլակ, Սյունյաց թեմի փոխառաջնորդ Հոգեշնորհ Տ. Աբգար վրդ. Հովակիմյանը վկայեց նոր ձեռնադրյալ սարկավագի հոգևոր-իմացական պատրաստվածության և արժանիքների մասին: Ձեռնադրության ընթացքում ընծայացուն բարձրացրեց իր ձեռքերը՝ դառնալով դեպի հավատացյալ ժողովուրդը՝ ի նշան աշխարհիկ կյանքից հրաժարման:

Առաջնորդ Սրբազան Հայրը հավարտ ձեռնադրության իր հայրական օրհնությունն ու հորդորը տվեց նորընծա սարկավագին: Սրբազան Հայրն իր խոսքի մեջ նշեց. *«…Շուրջ 200 տարի է, ինչ Սիսիանի Սուրբ Հովհաննես եկեղեցում ձեռնադրություն չէր կատարվել, ուստի մեծ խորհուրդ ունի այսօրինակ ձեռնադրությունը. իր քաղաքում, իր եկեղեցում և իր ժողովրդին ծառայելու համար մեր՝ հոգևորականներիս շարքերը համալրելու կոչվեց մի սարկավագ ևս»*: Սրբազան Հայրն ուրախությամբ նշեց, որ շատ սյունեցիներ ուսանում են հոգևոր կրթօջախներում ու շատերն էլ արդեն ստանձնել են հոգևոր ծառայություն ինչպես արտասահմանյան թեմերում, այնպես էլ Սյունյաց թեմում:

ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄԻ ՓՈԽԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ